

# ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Երբ սիրելին կը դադրի պահ մը, իսկոյն իր գորութիւնը կորսնցնելով՝ կը յանգի: Ուստի անոր հարկատր է սիրոյ գործեր կատարել, այսինքն՝ ամէն ինչէ վեր սիրել զԱստուած, ամէն բանի համար գոհանալ իրմէ, օրհնել զԱյն, ոչինչ խնայել Աստուծոյ համար, մեղքէ հեռու մնալ, անկեղծութեամբ ծառայել իրեն, կատարել բոլոր ցանկութիւնները, կատարել սիրոյ ամբողջութեան ու կատարելութեան վերաբերող միւս բոլոր աստուածահաճոյ առաքինութիւնները: Սէրը հաւատքի ու յոյսի պահակն է եւ ըստ առաքեալի՝ «օրէնքի լռումը» (Հռոմ. 13.10), որովհետեւ սիրոյ պատուիրանէն կախեալ են ամբողջ օրէնքն ու մարգարէները: Ուստի հաւատքը արմատ է, յոյսը ոստ, իսկ սէրը՝ պտուղ:

Առաքինին իր ողջ կեանքի ընթացքին կ'երկնչի ու կը դողայ, որ իր առաքինութեան արդիւնքները չկորսնցնէ. «Ահ ու դողով դուք ձեր փրկութեան համար աշխատեցէ՛ք» (Փիլյ. 2.12): Բայց այս երկիւղը անոր տրտմական ու տանջող կրքեր չի պատճառեր, այլ միշտ քաղցր բերկրանք կը բերէ. «Միացուր իմ սիրտս՝ որպէսզի քու անունէդ վախճայ» (Մատթ. 83.11):

Այսպիսին որքան բարձր կը թռչի դէպի առաքինութեան բարձունքը, այնքան անոր մէջ կը չարանայ անկումի երկիւղը, եւ որքան վախճայ անկումէն՝ այնքան վեր կը սլանայ դէպի առաքինութիւններու ծայրագոյն գագաթը:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԹԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

### ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կենջ մը վկայութիւնը:

Կախարդութեան մեղքը կ'իյնայ ո'չ միայն անոր հետ զբաղողներուն, այլ նաեւ անոնց հարազատներուն վրայ: «Հարազատս կը հմայէր եւ գանազան «երկնային» նամակներ կը գրէր: Շատ տխուր ու սարսափելի օրեր անցուց: Այդ անէծքէն կը տառապէին ո'չ միայն ինքը, այլ նաեւ զաւակը, դուստրը եւ ուրիշ մերձաւորներ: Սոսկալի է, որ մարդիկ Աստուծոյ մասին յստակ պատկերացում չունին, մէկ տեղէն միւսը կը նետւին, Աւետարանականներու երեկոներէն սկսեալ մինչեւ Շաբաթապահ Գալստականները: Ի՛նչ սարսափելի անէծք: Անոնք թէեւ ամբողջ հոգիով կ'ուզեն, բայց չեն յաջողիր գտնել ճշմարտութիւնը: Մարդիկ կախարդութիւնը մեղք չեն համարեր, բայց անիկա կը մթնցնէ ու կը կաշկանդէ հոգին: «Մօրաքոյրս գանազան մութ գործերու սարկուհի է: Առանց օղիի ու ծխախոտի չի կրնար դիմանալ: Զաւակն ու հարսը նոյնպէս Մատանային իշխանութեան տակ կը գտնուին: Ինչ'ընէր կախարդութիւնը: Եղբայրս մագնիսահար եղած է: Զեմ գիտեր՝ այդ բառը յստակ ի՞նչ կը նշանակէ, բայց երբ գովազդի մը մէջ կարդացի «աղօթքները չեն օգներ» խօսքերը, արդէն հասկցայ, քանի որ եղբայրս Աստուծոյ մասին որեւէ բան չ'ուզեր լսել:...

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՂԻՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՂԻՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 42

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 12:35-44

Յիսուս տաճարին մէջ ուսուցանելու ընթացքին հարցուց ժողովուրդին.՝ Օրէնքի ուսուցիչները ինչպէ՞ս կրնան ըսել, թէ Քրիստոս՝ խոստացուած Փրկիչը, Դաւիթի սերունդէն է, երբ Դաւիթ ինք Սուրբ Հոգիով ներշնչուած կ'ըսէ.

«Տէրը ըսաւ իմ Տիրոջս.՝ աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Եթէ Դաւիթ գայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս ուրեմն Քրիստոս անոր որդին է:

Ժողովուրդը հաճոյքով մտիկ կ'ընէր Յիսուսի, որ իր ուսուցումները շարունակելով կ'ըսէր.՝ Զգոյշ եղէ՛ք օրէնքի ուսուցիչներէն, որոնք կը սիրեն փառաւոր գգեստներով շրջիլ, հրապարակներու վրայ մարդոցմէ յարգալիք բարեւներ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ այրիներուն տունները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն: Անոր համար աւելի իստ դատապարտութիւն պիտի ընդունին:

Յիսուս կեցած էր տաճարի գանձանակին մօտ եւ կը դիտէր ժողովուրդը, որ դրամ կը նետէր գանձանակին մէջ: Շատ մը հարուստներ մեծ գումարներ նետեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ եւ նետեց երկու լումայ, որ հինգ դահեկան կ'ընէ: Յիսուս մօտը կանչեց իր աշակերտները եւ ըսաւ անոնց.՝ Վստահ գիտցէ՛ք, որ այս թշուառ այրին բոլորէն շատ դրամ նետած եղաւ գանձանակին մէջ, որովհետեւ միւսները իրենց աւելորդ գումարներէն նետեցին, մինչ ան՝ հակառակ չճաւոր ըլլալուն՝ ինչ որ ունէր նետեց, իր ամբողջ ապրուստը:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐՔ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ



Ս. Մեսրոպ Մաշտոց ծնած է Տարօն գաւառի Հացեկաց գիւղը: Սորված է Յունարէն, Ասորերէն եւ Պարսկերէն լեզուները: Հայոց Խոսրով Գ. թագաւորի պալատին մէջ վարած է գիւնուորական ֆարսուղարի պաշտօն եւ նանչուած է որպէս գիտնական անձնաւորութիւն:

Աստուծոյ, ազգին ու եկեղեցիին հանդէպ իր սէրը այնքան վառ եղած է, որ թագաւորական պալատը ձգելով դարձած է կուսակրօն եկեղեցական եւ նուիրուած է Ս. Աւետարանի փարոզչութեան:

Ս. Սահակի նման, ինքն ալ իր շուրջը հաւաքած է երիտասարդ կրօնաւորներ եւ անոնց հետ շրջած է Հայաստանի գաւազան կողմերը՝ Քրիստոսի լոյսը տարածելու համար: Իր ջանքերը եղած են արդիւնաւետ: Իր փարոզներուն շնորհիւ Գողթան գաւառի մէջ ջնջուած են հեթանոսական մեղսալի սովորութիւնները եւ մարդիկ աստուածապաշտութեան հետեւած են:

Իր փարոզներուն ընթացքին զգացած է հայ լեզուի համար սեփական գիրերու անհրաժեշտութիւնը եւ ձեռնարկած է հայ գիրերու գիւտին:

Ի վերջոյ աստուածային յայտնութեամբ կատարելագործած է իր աշխատանքը եւ ամբողջացուցած հայոց այբուբենը: Ձեռնարկած է Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան:

Ս. Մեսրոպ առաջին ուսուցիչն է հայ լեզուին եւ հիմնադիրը՝ հայ գրականութեան: Ինքն է հայերէնը գրաւոր լեզու դարձնող ուսուցիչը:

Թարգմանչական աշխատանքի կողքին գրած է շարականներ, յորդորական թուղթեր եւ աղօթքներ:

Մեսրոպ Մաշտոց եղած է հայ Ծիսարանի առաջին խմբագիրը, որ յետագային ունեցած է իր յաւելումները: Այդ գիրքը իր անունով կոչուած է «Մաշտոց», որ կը գործածուի մինչեւ այսօր:

Ս. Մեսրոպ Մաշտոց հայ գիրերու գիւտէն ետք հնարած է նաեւ Վրացիներուն եւ Աղուաններուն այբուբենը:

### ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Î»³ÝùÇ ³é³çÝáñ¹áÕ »ð Ë³Õ³Õáõ-ÃÇõÝ á³ñ»ðáÕ Û»ñ ³é¹áõ³ÍÁ, øñÇé¹á-ë, ¹á°õÝ ³é³çÝáñ¹ç° Û»½, áñáç¹ç½Ç ³ñ¹³ñáõÃ»³Ý ùáõ áÕáñÛáõÃ»³Ûµ¹ª Ë³-Õ³ÕáõÃ»³Ûµ Ñ³éÝÇÝù Ì»³ÝùÇ »ð ÷ñÏáõÃ»³Ý Ý³õ³Ñ³Ý-Çé¹Á. áñáñÑ»³i»ð ¹á°õÝ »ë Û»ñ ù-Ý³Ï³ÝÝ áõ ÷ñÏÇáÁ£ ø»½Ç° ÌÁ ³Û»É»Ý ÷³éùÁ, ÇËË³Ýáõ-ÃÇõÝÝ áõ á³çõÁ, ³ÛÁÛ »ð ÛÇË³ »ð Û³õÇ³i»³Ýë Û³õÇ³i»ÝÇõ£ ²ÛçÝ£

# ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, Կայենին՝ առաջին մարդասպանին եւ եղբայրատեացին գործերուն ու պատուհասներուն մասին գրեցի անոր համար, որ գիտնաք, թէ ամէն մարդ որ իր եղբայրը, այսինքն ընկերը ստէ, մարդասպան է Կայէնի նման, որովհետեւ բոլոր մարդիկ իրարու եղբայր են ստեղծագործութեամբ: Քրիստոնեաները ա՛լ աւելի եղբայր են, որովհետեւ միեւնոյն Աւագանին ծնունդ ըլլալով՝ երկնաւոր Հօր որդի են եւ ամէն օր կ'ըսեն. «Հայր մեր որ երկինքն ես»:

Գիտցէք նաեւ այս, որ սպաննութիւնը բազմապիսի ձեւերով կը կատարուի. ոմանք սուրով կամ այլ գործիքներով կը սպաննեն, ուրիշներ՝ դեւերով եւ այլ բազմապիսի հնարներով, իսկ ուրիշներ՝ մատնութեամբ պատճառ կ'ըլլան սպանման եւ մահուան, եւ այս բոլորին սկիզբը ատելութիւնն ու բարկութիւնն է: Այս պատճառաւ մեծ աւետարանիչը՝ Յովհաննէս կ'ըսէ. «Ամէն ով, որ ստէ իր եղբայրը, այսինքն ընկերն ու հաւատակից քրիստոնեան, Կայէնին նման եղբայրասպան է եւ անոր անէծքն ու պատուհասը կ'ընդունի» (Ա. Յովհ. Գ 15): Քրիստոս եւս Աւետարանին մէջ կը հրամայէ, թէ՛ «Ան, որ գուր տեղ բարկանայ իր եղբոր, գեհէնին պարտական է» (Մատ. Ե 22):

Արդ, ողորմեցէ՛ք ձեզի, ինչայցէ՛ք իրարու եւ մի՛ աւտէ գիրար: Մի՛ նախանձիք, յիս մի՛ պահէք, մի՛ մատնէք, մի՛ գրկէք, մի՛ չարախօսէք մի՛ անարգէք, խոռով մի՛ մնաք, մի՛ զարնէք, անողորմ մի՛ ըլլաք:

# ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

## ԶԻՐԱՐ ՀԱՍԿԱԼ Կարդա՛ Առակաց 16.16-22

Ամուսինի մը համար լաւագոյն ձեւերէն մէկը իր կինը սիրելու՝ զայն հասկնալն է: Պետրոս առաքեալ կ'ըսէ, թէ շատ կարեւոր է ամուսինի մը համար «Բնակիլ (իր կնոջ հետ) գիտակցութեամբ» (Ա. Պետ. 3.7):

Այս սկզբունքը գործնական է երկուստեք: Ամուսիններ ալ նոյնպէս կ'ուզեն հասկցուիլ: Իսկութեան մէջ բոլորս ալ կ'ուզենք հասկցուիլ: Ամէն մարդ, ամուսնացած ըլլայ կամ ո՛չ, կ'ուզէ հասկցուած ըլլայ ուրիշներու կողմէ, որքան կարելի է խորապէս եւ ամբողջութեամբ: Բոլորս ալ այդ կարծիքով ծնած ենք եւ այնպէս կը թուի, թէ այդ պահանջը պիտի չչքանայ երբեք: Տկար եւ խուսափոխական խօսք է ըսելը, թէ մենք գիրար չենք կրնար հասկնալ: Մենք կրնանք եւ պէտք է հասկնանք: Թերեւս այդ մէկը ժամանակի կը կարօտի: Ժամանակ՝ իրարու ներկայութեան մէջ զտնուելու, հարցումներ հարցնելու, գիրար ուշադրութեամբ մտիկ ընելու: Շատ պարզ է եւ նոյնպէս երբեմն շատ դժուար: Անշուշտ ոչ ոք կրնայ իր դիմացինին հոգիին խորհրդաւորութիւնը ամբողջութեամբ հասկնալ: Սակայն կրնանք ամէն օր նոր բան մը սորվիլ: Իմաստուն առակագիրը հասկացողութիւնը կը կոչէ «կեանքի աղբիւր» (Առակ 16.22), խորունկ իմաստութեան աղբիւր մը բոլոր անոնց համար, որ զայն կը փնտռեն:

Հասկնալը ժամանակի կը կարօտի եւ ամենէն թանկագին նուէրներէն մէկն է, որ կրնանք ուրիշներու տալ: Որքան ժամանակ տրամադրելը մեր շուրջիներուն ցոյց կուտայ մեր գանձը սիրելու չափը: Խնդրէ՛ Աստուծմէ, որ քեզի շնորհք տայ ժամանակ տրամադրելու եւ հասկնալու կեանքիդ մէջ եղող կարեւոր մարդիկը:

«ՄՏԻԿ ԸՆԵԼԸ ԲԱՅ ԴՈՒՌ ՄԸՆ Ե ՀԱՍԿԱՆՈՒ ՀԱՍԱՐ»:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ

19.1-11

Ահա Տէրը թեթեւագնաց ամպի վըրայ նստած Եգիպտոս պիտի գայ: Անոր դիմաց Եգիպտոսի կուռքերը պիտի դողան, եգիպտացիներու սիրտը պիտի հալի:

Եգիպտացիները եգիպտացիներուն դէմ պիտի ելլեն, եղբայրը եղբօր դէմ պիտի պատերազմի եւ ընկերը՝ իր ընկերոջ դէմ, քաղաքը քաղաքի դէմ եւ թագաւորներ թագաւորներու դէմ:

Եգիպտացիներ իրենց հոգեկան կորովը պիտի կորսնցնեն, որովհետեւ անոնց ծրագիրները պիտի խառնեն, ուստի անոնք խորհուրդ պիտի ուզեն իրենց աստուածներէն ու կուռքերէն, ոգեհարցներէն ու վիճակներէն:

Խստասիրտ տէրերու ձեռքը պիտի մատնեն գիրենք, անգութ թագաւորներ պիտի տիրեն անոնց, - կ'ըսէ Երկնային Զօրքերու Տէրը:

Եգիպտացիներ գետափնեայ ջրակոյտերէն պիտի խմեն իրենց ջուրը, որովհետեւ Նեղոսը պիտի նուազի ու ցամփի:

Նեղոսէն բացուած առունները պիտի փակուին եւ ամբողջ գետը պիտի ցամփի. բոլոր մարգագետինները, եղէգնուտներն ու շամբուտները եւ մամուռով պատուած մարգագետինները պիտի չորանան:

Նեղոսի շուրջը անած ամէն կանաչութիւն, եւ գետեզրին մշակուած բոլոր արտերը խորշակահար պիտի չորանան:

**Շարունակել  
Աստուածաշունչէն**

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ

2.1-10

Այնուհետեւ, տասներորս տարի ետք կրկին Երուսաղէմ գացի Բանաբասին հետ, Տիտոսն ալ միասին առնելով: Գացի, որովհետեւ Աստուած յայտնեց որ երթամ: Այնտեղ Երուսաղէմի եկեղեցիին գեկուցեցի հեթանոսներուն մէջ կատարած փարձուածքներու մասին: Առանձնաբար գեկուցում տուի նաեւ եկեղեցւոյ ղեկավարներուն, որպէսզի իմ ուղղութեան մասին իրենց հաւանութիւնը ունենան, եւ գուր տեղ աշխատած չըլլամ եւ չաշխատիմ: Անոնք բնաւ չստիպեցին որ թլփատուի ինծի ընկերացոյ Տիտոսը, որ հեթանոսութենէ կու գար: Թլփատութիւն պահանջողները քանի մը կեղծ փրիստոնեաներ էին, որոնք հաւատացեալներու շարքերուն մէջ սարդած էին՝ Յիսուս Քրիստոսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու եւ մեզ Մովսիսական օրէնքներու ծառայութեան մէջ պահելու համար: Բայց վայրկեան մը իսկ տեղի չտուինք անոնց, որպէսզի վստահ ըլլաք թէ նշմարիտ էր ինչ որ ձեզի փարձեցիմք:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒՄՆԵՐԸ**